Հաստատված է

Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցի հիմնադիր համաժողովի կողմից

12 մարտի, 2024թ.

ԱՐՑԱԽԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՔՀԿ-ՆԵՐԻ ՑԱՆՑԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԵՐԵՎԱՆ – 12 մարտի, 2024թ.

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանցը (այսուհետև՝ Ցանց) ձևավորվել և գործում է կամավորության, հավասարության, ինքնուրույնության, բարեխղճության և կառավարման կոլեգիալության սկզբունքների հիման վրա:

1.2 Ցանցը քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ոչ ֆորմալ կազմավորում է և գործում է Հայաստանի Հանրապետության գործող օրենսդրությանը և սույն կանոնակարգին համապատասխան:

1.3 Ցանցի անվանումն է.

- հայերեն՝ Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ցանց, կրճատ՝ Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության ՔՀԿ-ների ցանց:
- ռուսերեն՝ «Сеть организаций гражданского общества, по защите прав насильственно перемещенных из Нагорного Крабаха», կրճատ՝ Сеть ОГО по защите прав насильственно перемещенных из Нагорного Крабаха.
- անգլերեն՝ "Network of Civil Society Organizations for the Protection of the Rights of Forcibly Displaced from Nagorno-Krabakh", կրճատ՝ Network of CSOs for the Protection of the Rights of Forcibly Displaced from Nagorno-Krabakh.

1.4 Ցանցը ունի խորհրդանիշ, որը հաստատվում է Ցանցի անդամների համաժողովի կողմից:

1.5 Ցանցը կարող է իր նպատակներից և խնդիրներից բխող առաջարկություններ ներկայացնել ՀՀ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման, սահմանադրական անկախ մարմիններին, դատական մարմիններին, այլ իրավաբանական անձանց:

1.6 Ցանցը կարող է համագործակցել ինչպես ՀՀ պետական և ոչ պետական մարմինների, արտասահմանյան, միջազգային և տեղական կազմակերպությունների, այնպես էլ՝ ֆիզիկական անձանց հետ:

1.7 Ցանցը կարող է ունենալ միջազգային կապեր, անդամակցել միջազգային ոչ կառավարական և ոչ առևտրային կազմակերպությունների ցանցերի, կնքել հուշագրեր և համաձայնագրեր օտարերկրյա, միջազգային, տեղական կազմակերպությունների և պետական մարմինների հետ:

1.8 Ցանցի քարտուղարության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Նալբանդյան փողոց, շենք 7, գրասենյակային տարածք 2:

2. ՑԱՆՑԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Ցանցի նպատակներն են.

ա) Նպաստել Արցախից տեղահանվածների ինտեգրմանը Հայաստանում,

բ) Ուժեղացնել Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանության մեխանիզմները, բարձրացնել նրանց արդարադատության հասանելիության, իրավունքների իրավական իրազեկության ու խնդիրների բարձրաձայնման մակարդակը:

գ) Զարգացնել Ցանցի անդամ կազմակերպությունների արցախահայերի իրավունքների պաշտպանության և այլ կարողությունների ուժեղացման իրականացման հետ կապված:

2.2 Ցանցի գործունեության առարկան է.

ա) Արցախից բռնի տեղահանված և խոցելի (սոցիալապես անապահով, գործազուրկ, հաշմանդամ, ուսանող, կին և այլն) համարվող անձանց անվճար իրավաբանական աջակցության տրամադրում՝ պետական և տեղական ինքակառավարման մարմինների հետ ունեցած խնդիրների լուծման համար:

բ) Արցախից բռնի տեղահանված տեղահանվածների իրավունքների պաշտպանություն՝ ձեռնարկելով իրավական պաշտպանության միջոցներ՝ Արցախից բռնի տեղահանվածների իրավունքների պաշտպանությունը տեղական ու միջազգային իրավական հարթակներում ներկայացնելու համար:

գ) Արցախից բռնի տեղահանվածների պետական և տեղական ինքակառավարման մարմինների հետ ունեցած խնդիրների լուծմանը ուղղված շահերի պաշտպանության իրականացում.

- Արցախից բռնի տեղահանվածների պետական և տեղական ինքակառավարման մարմինների հետ ունեցած խնդիրների լուսաբանում և հանրայանցում,

- Իրավական խնդիրների հավաքագրում, դրանց լուծման համար հանրային քաղաքականությունների, իրավական լուծման մեխանիզմների, փաստաթղթային և նորմատիվ բազայի ստեղծման բարելավման և լավարկման առաջարկությունների կազմում և հասցեագրում իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին, ջատագովության իրականացում:

դ) Արցախից բռնի տեղահանվածների իրավական խնդիրների լուծման, իրավական իրազեկման և իրավունքների պաշտպանության արդյունավետ ու կայուն իրականացման համար ինովացիոն և ինտերակտիվ լուծումներով էլեկտրոնային հարթակի պատրաստում և գործարկում:
ե) Արցախից բռնի տեղահանվածների պատմությունների փաստագրում, իրավական վերլուծությունների իրականացում, զեկույցների, իրավական փաստաթղթերի կազմում և դրանց ներկայացում միջազգային հանրությանը, այդ թվում միջազգային իրավական կառույցներին:
զ) Ցանցի նպատակների և գործունեության առարկայի շուրջ արցախահայերի իրավունքների պաշտպանության հարցերով զբաղվող ՔՀԿ-ների, փորձագետների և շահագրիգիռ այլ անձանց կոլեկտիվ ջանքերի համախմբում:
է) միջազգային կազմակերպություններում և հարթակներում Արցախի պատմամշակութային հուշարձանները պահպանելու հարցի բարձրացում:
զ) Արցախահայերի իրավունքների պաշտպանության, իրավական իրազեկության և խնդիրների բարձաձայնման հետ կապված ՔՀԿ-ների կարողությունները ամրապնդելու նպատակով սեմինարների, ուսուցումների և այլ միջոցառումների կազմակերպում:
ե) Արցախահայերի վերաբերյալ իրավական ակտերի նախագծման և փորձաքննության աշխատանքներին մասնակցություն:
զ) Համաժողովներ, աշխատաժողովների, դպրոցների, սեմինարների, կլոր սեղանների, դասընթացների, հանդիպումների, քննարկումների կազմակերպում, արցախահայերի իրավունքների պաշտպանության ոլորտի զարգացմանն ուղղված այլ աշխատանքներ իրականացում:
է) օրենքով չարգելված այլ գործունեության իրականացում:

3. ՑԱՆՑԻ ԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆԸ, ԱՆԴԱՄՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3.1 Ցանցի անդամ կարող են լինել քաղաքացիական հասարակության այն կազմակերպությունները, որոնք միացել են Կոալիցիայի հիմնադրման Հռչակագրին, ընդունում են սույն Կանոնակարգը, իրենց գործունեությամբ նպաստում են Ցանցի նպատակների իրագործմանը:
3.2 Գրավոր դիմումի համաձայն Ցանցի անդամի ընդունելության մասին որոշումը կայացվում է Ցանցի կառավարման խորհրդի կողմից՝ կառավարման խորհրդի առնվազն երկու անդամների երաշխավորմամբ:
3.3 Ցանցը վարում է իր անդամների հաշվառումը և պարբերաբար թարմացնում նրանց վերաբերյալ տվյալները: Ցանցի անդամների հաշվառում վարելու կարգը և պայմանները սահմանվում է Ցանցի կառավարման խորհրդի կողմից:
3.4 Ցանցի անդամությունից դուրս գալը կատարվում է տվյալ անդամի գրավոր դիմումի կամ Ցանցի կառավարման խորհրդի՝ տվյալ անդամին Ցանցի անդամությունից հեռացնելու մասին որոշման հիման վրա՝ սույն կանոնակարգի 3.6 կետով սահմանված պարտականությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:
3.5 Ցանցի անդամն իրավունք ունի՝
ա) իր ներկայացուցիչների միջոցով մասնակցել Ցանցի կառավարմանը,
բ) Ցանցի գործունեության վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր,
գ) ազատորեն արտահայտել սեփական տեսակետը,
դ) նախաձեռնել ծրագրեր՝ ուղղված Ցանցի զարգացմանը,
ե) իրազեկ լինել Ցանցի գործունեությանը,
զ) օգտվել Ցանցի իրավական, տեխնիկական, տեղեկատվական և այլ աջակցությունից,

է) անարգել դուրս գալ Ցանցի անդամությունից:

3.6 Ցանցի անդամը պարտավոր է.

ա) մասնակցել և աջակցել Ցանցի գործունեությանը,

բ) նպաստել Ցանցի զարգացմանը,

գ) առանց Ցանցի իրավասու մարմնի կողմից տրված լիազորագրի հանդես չգալ Ցանցի անունից,

դ) գործել սույն կանոնակարգին համապատասխան, կատարել Ցանցի կանոնակարգի պահանջները, Ցանցի ղեկավար մարմինների որոշումները:

3.7 Ցանցի անդամի պատասխանատվությունը.

ա) Ցանցի անդամը կրում է պատասխանատվություն սույն Կանոնակարգով սահմանված իր պարտավորությունների համար Ցանցի կառավարման խորհրդի որոշմամբ կամ դրա ներկայացմամբ՝ Ցանցի համաժողովի որոշմամբ,

բ) Ցանցի անդամի պատասխանատվության միջոցներն են.

- Ցանցի կողմից իրականացվող ծրագրերին, միջոցառումներին մասնակցության սահմանափակումը,
- Ցանցի գործունեության մասին տեղեկատվության ներկայացման սահմանափակումը,
- Ցանցի համաժողովին մասնակցության սահմանափակումը,
- Ցանցի Կառավարման խորհրդում ներկայացվածության սահմանափակումը,
- Ցանցի անդամությունից զրկումը:

գ) Ցանցի անդամը պատասխանատվություն չի կրում Ցանցի կամ դրա անդամ այլ կազմակերպությունների պարտավորությունների համար, ինչպես նաև Ցանցը պատասխանատվություն չի կրում իր անդամների պարտավորությունների համար:

4. ՑԱՆՑԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

4.1 Ցանցի կառավարման կառուցվածքն է՝ համաժողովը, կառավարման խորհուրդը և քարտուղարությունը:

4.2 Ցանցի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվում է Ցանցի համաժողովի կողմից:

4.3 Ցանցի բարձրագույն մարմինը նրա անդամների համաժողովն է, որին պատկանում է Ցանցի կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունքը:

4.4 Ցանցի համաժողովը կարող է գումարվել ներկայացուցչական պատվիրակների միջոցով՝ կառավարման խորհրդի կողմից սահմանված քվոտայով: Կառավարման խորհուրդը որոշում է համաժողովի անցկացման օրը, ժամը և տեղը, ինչպես նաև համաժողովի օրակարգի նախագիծը և այդ մասին համաժողովի անցկացումից ոչ ուշ քան 10 օրացուցային օր առաջ էլեկտրոնային եղանակով ծանուցում է Ցանցի անդամներին:

4.5 Ցանցի համաժողովը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի ձևով, որոնք հրավիրվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան տարին մեկ անգամ:

4.6 Ցանցի արտահերթ համաժողով գումարվում է Ցանցի քարտուղարության, Ցանցի կառավարման խորհրդի, Ցանցի անդամների ընդհանուր թվի առնվազն 1/3-ի պատճառաբանված որոշման դեպքում, ոչ ուշ, քան 15 օրացուցային օրվա ընթացքում՝ Ցանցի քարտուղարության կողմից: Արտահերթ համաժողովները հրավիրվում են հրավիրողի օրակարգով:

4.7 Ցանցի համաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե Ցանցի համաժողովին մասնակցում են Ցանցի բոլոր անդամների կամ համաժողովի բոլոր պատվիրակների ընդհանուր թվի 1/3-ը: Որոշումներն ընդունվում են համաժողովի մասնակիցների ձայների պարզ մեծամասնությամբ: Համաժողովը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել նաև առցանց կապի այլ միջոցներով:

4.8 Ցանցի համաժողովը.

ա) հաստատում է Ցանցի կանոնակարգը, կատարում է փոփոխություններ դրանում և (կամ) հաստատում է նոր խմբագրությամբ կանոնակարգը և Ցանցի խորհրդանիշը,

բ) որոշում է Ցանցի կառավարման խորհրդի թվաքանակն ու քվոտաները, մեկ տարի ժամկետով ընտրում է Ցանցի կառավարման խորհրդի անդամներին (Ցանցի քարտուղարության գործառույթներն իրականացնող կազմակերպությունը ի պաշտոնե մտնում է Ցանցի կառավարման խորհրդի կազմի մեջ), փոփոխում է կառավարման խորհրդի կազմը, վաղաժամկետ դադարեցնում է կառավարման խորհրդի անդամների լիազորությունները,
գ) քննարկում և հաստատում է Ցանցի կառավարման խորհրդի և քարտուղարության հաշվետվությունները:

4.9 Ցանցի կառավարման խորհրդի լիազորությունները.

ա) Կառավարման խորհուրդը Ցանցի ղեկավար մարմինն է Ցանցի համաժողովների միջև ընկած ժամանակահատվածում,
բ) քննարկում և որոշումներ է կայացնում Ցանցի գործունեությանն առնչվող բոլոր հարցերի վերաբերյալ, բացառությամբ այն հարցերի, որոնք մտնում են Ցանցի համաժողովի իրավասությունների մեջ,
գ) նախապատրաստում է Ցանցի համաժողովները, սահմանում է Ցանցի համաժողովի պատվիրակների քվոտան ըստ Ցանցի անդամների թվի, Ցանցի համաժողովի գումարման օրվանից առնվազն 15 օր առաջ կազմակերպում է Ցանցի համաժողովի պատվիրակների ընտրությունը,
դ) որոշում է կայացնում Ցանցին անդամագրելու և անդամությունից հեռացնելու վերաբերյալ,
ե) որոշումներ է կայացնում Ցանցի անդամների նկատմամբ սույն Կանոնակարգով սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու վերաբերյալ,
զ) որոշումներ է կայացնում Ցանցի մշտական և ժամանակավոր հանձնաժողովներ, աշխատանքային և տարածքային հանձնախմբեր և/կամ այլ կառույցներ ստեղծելու և լուծարելու մասին, հաստատում է դրանց աշխատակարգերը, որոնք չեն կարող հակասել սույն կանոնակարգին, նշանակում և ազատում է դրանց համակարգողներին և պատասխանատուներին, վերջիններիս տալիս է լիազորագրեր,
է) քննարկում և հաստատում է Ցանցի ռազմավարական պլանը, կայունության և ֆինանսական պլանը, մոնիթորինգային ծրագիրը, տեսանելիության պլանը և այլ փաստաթղթեր:
ը) ընտրում է Ցանցի հանձնաժողովների, աշխատանքային և տարածքային հանձնախմբերի, փորձագիտական կոմիտեի և/կամ այլ կառույցների անդամներին,
թ) որոշում է կայացնում պետական և անկախ կառույցներին կից հասարակական խորհուրդներին, հանձնաժողովներին և այլ մարմիններին, ինչպես նաև միջազգային հակակոռուպցիոն ցանցերին Ցանցի անդամակցելու վերաբերյալ,
ժ) ընտրում է Ցանցի կառավարման խորհրդի նախագահին և վաղաժամկետ դադարեցնում է կառավարման խորհրդի նախագահի նրա լիազորությունները,
ժա) Ցանցի անունից ընդունում և հանդես է գալիս հայտարարություններով, հաշվետվություններով, կոչերով և դիտարկումներով:

4.10 Ցանցի կառավարման խորհրդի գործունեության կազմակերպման կարգը.

ա) Ցանցի կառավարման խորհուրդը իր հերթական նիստերը հրավիրում է մեկ ամիսը մեկ անգամ՝ Ցանցի քարտուղարության կողմից: Ցանցի կառավարման խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել Ցանցի քարտուղարության կողմից.

- Ցանցի կառավարման խորհրդի անդամների առնվազն 1/3-ի գրավոր պահանջով,
- Ցանցի կառավարման խորհրդի նախագահի գրավոր պահանջով,
- Ցանցի քարտուղարության համակարգողի գրավոր պահանջով:

բ) Ցանցի կառավարման խորհրդի նիստը կարող է հարցեր քննարկել և որոշումներ կայացնել, եթե նիստին մասնակցում են կառավարման խորհրդի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Որոշումներն ընդունվում են Ցանցի կառավարման խորհրդի նիստին մասնակցող անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
գ) Ցանցի կառավարման խորհրդի կողմից կարող են հրավիրվել կառավարման խորհրդի ընդլայնված նիստեր՝ Ցանցի հանձնաժողովների, փորձագիտական կոմիտեի և տարածքային հանձնախմբերի համակարգողների և պատասխանատուների, ինչպես նաև Ցանցի այլ անդամների մասնակցությամբ,

դ) Ցանցի կառավարման խորհրդի նիստին դրա որոշմամբ կարող են հրավիրվել նաև այլ ֆիզիկական ու իրավաբանական անձինք:

4.11 Ցանցի Կառավարման խորհրդի անդամն իրավունք ունի՝

ա) սույն Կանոնակարգին համապատասխան ընտրվել Ցանցի կառավարման խորհրդի նախագահ,

բ) Ցանցի և Կառավարման խորհրդի գործունեության վերաբերյալ ներկայացնել առաջարկություններ, դիտողություններ, գործնական ծրագրեր,

գ) ազատորեն արտահայտել սեփական տեսակետը,

դ) իրականացնել Ցանցի Կառավարման խորհրդի որոշումների մշտադիտարկում և վերահսկողություն,

ե) իրազեկ լինել Ցանցի և Կառավարման խորհրդի գործունեության մասին որոշումների մշտադիտարկման արդյունքներին,

զ) օգտվել Ցանցի իրավական, տեխնիկական, տեղեկատվական և այլ աջակցությունից,

է) իր դիմումի համաձայն անարգել դուրս գալ Ցանցի կառավարման խորհրդի անդամությունից:

4.12 Ցանցի Կառավարման խորհրդի անդամը պարտավոր է.

ա) կանոնավոր կերպով մասնակցել Ցանցի Կառվարման խորհրդի նիստերին (նիստի մասնակցության անհնարինության դեպքում լիազորում է Կազմակերպության այլ ներկայացուցչի),

բ) մասնակցել և աջակցել Ցանցի և դրա Կառավարման խորհրդի գործունեությանը,

գ) նպաստել Ցանցի զարգացմանը,

դ) նպաստել Ցանցի Կառավարման խոհրրդի գործունեության արդյունավետության բարձրացմանը,

ե) գործել սույն կանոնակարգին համապատասխան, կատարել Ցանցի կանոնակարգի պահանջները, Ցանցի ղեկավար մարմինների որոշումները,

ը) իր լիազորությունների ավարտին Ցանցի քարտուղարությանը ներկայացնել հաշվետվություն հաշվետու ժամանակաշրջանում կատարած աշխատանքի մասին՝ Ցանցի համաժողովում հրապարակելու նպատակով:

4.13 Ցանցի Կառավարման խորհրդի անդամի պատասխանատվությունը.

ա) Ցանցի կառավարման խորհրդի անդամը կրում է պատասխանատվություն սույն Կանոնակարգով սահմանված իր պարտավորությունների համար Ցանցի կառավարման խորհրդի որոշմամբ կամ նրա ներկայացմամբ՝ Ցանցի համաժողովի որոշմամբ,

բ) Ցանցի Կառավարման խորհրդի անդամի պատասխանատվության միջոցներն են.

- Ցանցի Կառավարման խորհրդի նիստերին մասնակցության սահմանափակումը՝ Կառավարման խորհրդի որոշմամբ սահմանված ժամկետով,
- Ցանցի և դրա Կառավարման խորհրդի գործունեության մասին տեղեկատվության ներկայացման սահմանափակումը՝ Կառավարման խորհրդի որոշմամբ սահմանված ժամկետով,
- Ցանցի կառավարման խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը՝ Ցանցի համաժողովի որոշմամբ:

4.14 Ցանցի կառավարման խորհրդի նախագահի ընտրության կարգը.

ա) Ցանցի Կառավարման խորհրդի նախագահն ընտրվում է Ցանցի հիմնադիր, հերթական կամ արտահերթ համաժողովներից հետո նույն օրը հրավիրված Ցանցի կառավարման խորհրդի առաջին իսկ նիստում՝ սույն Կանոնակարգի հիման վրա ձևավորված Կառավարման խորհրդի անդամների կողմից՝ դրա կազմից,

բ) Ցանցի Կառավարման խորհրդի նախագահն ընտրվում է մեկ տարի ժամկետով,

գ) Կառավարման խորհրդի նույն անդամը չի կարող ավելի, քան երկու անգամ անընդմեջ ընտրվել որպես Կառավարմանը խորհրդի նախագահ:

4.15 Ցանցի Կառավարման խորհրդի նախագահի լիազորությունները,

ա) Ցանցի կառավարման խորհրդի նախագահն ունի սույն Կանոնակարգով Ցանցի կառավարման խորհրդի անդամի բոլոր իրավունքները,

բ) Կառավարման խորհրդի նախագահը նախագահում է Ցանցի Կառավարման խորհրդի նիստերը,
գ) Կառավարման խորհրդի նախագահը Կառավարման խորհրդի նիստի ընթացքում պարտավոր է քվեարկության դնել Ցանցի գործունեության վերաբերյալ Կառավարման խորհրդի անդամների կողմից կատարված յուրաքանչյուր առաջարկ,
դ) Կառավարման խորհրդի նախագահը Ցանցի խորհրդի անդամների կարգապահության ու ակտիվության վերաբերյալ առաջարկություններ է ներկայացնում նրանց նկատմամբ սույն Կանոնակարգով պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ,
դ) Կառավարման խորհրդի նախագահը, Ցանցի քարտուղարության համակարգողի հետ միասին, ստորագրում է Կառավարման խորհրդի նիստերի արձանագրությունները,
դ) Կառավարման խորհրդի նախագահը Կառավարման խորհրդի համաձայնությամբ ներկայացնում է Ցանցի Կառավարման երրորդ անձանց հետ հարաբերություններում,
դ) Կառավարման Խորհրդի նախագահը իրականացնում է Ցանցի Կանոնակարգով Կառավարման խորհրդի նախագահի համար նախատեսված այլ լիազորություններ:
ե) Կառավարման խորհրդի նախագահի լիազորությունները դադարում են հետևյալ դեպքերում.

- Կառավարման խորհրդի նիստին առնվազն մեկ անգամ չմասնակցելու դեպքում՝ առանց հարգելի պատճառի:
- Կառավարման խորհրդին գրավոր հրաժարականի ներկայացման դեպքում:
- Կառավարման խորհրդի որոշմամբ:

զ) Կառավարման խորհրդի նիստին Կառավարման խորհրդի նախագահի չմասնակցելու և Կառավարման խորհրդին գրավոր հրաժարականի ներկայացման դեպքերում, մինչև Կառավարման խորհրդի նոր նախագահի ընտրվելը, Կառավարման խորհրդի նիստը նախագահում է Ցանցի քարտուղարության համակարգողը:

4.16 Ցանցի Կառավարման խորհրդի նախագահը պարտավոր է.

ա) պատշաճորեն իրականացնել սույն Կանոնակարգով Կառավարման խորհրդի անդամին վերագրվող բոլոր պարտականությունները,
բ) կանոնավոր կերպով կազմակերպել և անցկացնել Կառավարման խորհրդի նիստերը,
գ) կանոնավոր կերպով մասնակցել Կառավարման խորհրդի նիստերին և սույն Կանոնակարգով սահմանված կարգով վարել նիստերը,
դ) անձնական օրինակով բարձր պահել Կառավարման խորհրդի նախագահի պատիվը և պատասխանատվությունը,
ե) նպաստել Ցանցի Կառավարման խորհրդի գործունեության արդյունավետության բարձրացմանը,
զ) գործել սույն կանոնակարգին համապատասխան, կատարել Ցանցի կանոնակարգի պահանջները, Ցանցի ղեկավար մարմինների որոշումները:

4.17 Ցանցի Կառավարման խորհրդի նախագահի պատասխանատվությունը.

ա) Ցանցի կառավարման խորհրդի նախագահը կրում է պատասխանատվություն սույն Կանոնակարգով սահմանված Կառավարման խորհրդի անդամի և Կառավարման խորհրդի նախագահի պարտականությունների համար՝ Ցանցի կառավարման խորհրդի որոշմամբ կամ նրա ներկայացմամբ՝ Ցանցի համաժողովի որոշմամբ,
բ) Ցանցի Կառավարման խորհրդի անդամի պատասխանատվության միջոցներն են.

- Ցանցի Կառավարման խորհրդի նիստերին մասնակցության սահմանափակումը՝ Կառավարման խորհրդի որոշմամբ սահմանված ժամկետով,
- Ցանցի և դրա Կառավարման խորհրդի գործունեության մասին տեղեկատվության ներկայացման սահմանափակումը՝ Կառավարման խորհրդի որոշմամբ սահմանված ժամկետով,
- Ցանցի Կառավարման խորհրդի նախագահի լիազորությունների դադարեցումը՝ Կառավարման խորհրդի որոշմամբ,
- Ցանցի կառավարման խորհրդի անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը՝ Ցանցի համաժողովի որոշմամբ:

4.18 Ցանցի փորձագիտական կոմիտեն.

ա) բաղկացած է արցախահայրի իրավունքների պաշտպանության և/կամ միջազգային իրավունքի ոլորտի ճանաչված տեղական և միջազգային փորձագետներից, անձանցից, որոնք ընտրվում են Ցանցի կառավարման խորհրդի կողմից,

բ) տրամադրում է փորձագիտական աջակցություն Ցանցի զարգացման ու հզորացման նպատակով,

գ) ուժեղացնում է Ցանցի միջազգային կապերը,

դ) նպաստում է Ցանցի ֆինանսական կայունության ապահովմանը,

ե) Ցանցի քարտուղարության համակարգողի իմացությամբ և լիազորությամբ ներկայացնում է Ցանցը միջազգային կարևորագույն հարթակներում:

4.19 Ցանցի քարտուղարությունը.

ա) հանդիսանում է Ցանցի գործադիր մարմինը,

բ) ապահովում է Ցանցի մարմինների աշխատանքների բնականոն ընթացքը և թափանցիկությունը,

գ) նախագահում, արձանագրում և ստորագրում է Ցանցի համաժողովի նիստերը,

դ) արձանագրում է կառավարման խորհրդի նիստերը,

ե) Կառավարման խորհրդի նիստերի բոլոր արձանագրությունները Ցանցի քարտուղարությունը չորս աշխատանքային օրվա ընթացքում ուղարկում է Կառավարման խորհրդի անդամներին, որից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում, եթե անդամների կողմից առարկություններ կամ լրացումներ չեն լինում, ստորագրվում է Կառավարման խորհրդի նախագահի և Ցանցի քարտուղարության համակարգողի կողմից:

զ) տնօրինում է Ցանցի արխիվը,

է) համակարգում է Ցանցի ընթացիկ և կազմակերպչական աշխատանքները, այդ թվում Ցանցը ներկայացնում է երրորդ անձանց հետ հարաբերություններում,

ը) Ցանցի անունից իրավասու մարմիններին և կազմակերպություններին ներկայացնում է Ցանցի կողմից պատրաստված առաջարկները և այլ փաստաթղթերը, Ցանցի անունից երրորդ անձանց հետ ստորագրում է երկկողմանի փաստաթղթեր,

թ) համակարգում է Ցանցի աշխատանքների կազմակերպման համար անհրաժեշտ դրամական միջոցների հայթայթման աշխատանքները,

ժ) վարում է Ցանցի անդամների հաշվառումը, անդամության նոր դիմումներ ներկայացված հայտերի ռեեստրը,

ժա) իր և փորձագիտական կոմիտեի կողմից կատարած աշխատանքների մասին հաշվետվություններ է ներկայացնում Ցանցի Կառավարման խորհրդին և Համաժողովին:

ժբ) Ցանցի քարտուղարության գործառույթները իրականացնում է «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպությունը, որի նախագահն ի պաշտոնե հանդիսանում է Ցանցի գլխավոր քարտուղարը:

5. ՑԱՆՑԻ ՄԻՋՈՑՆԵՐԸ

5.1 Ցանցը չունի առանձնացված գույք:

5.2 Ցանցի միջոցները Ցանցի կառավարման խորհրդի որոշմամբ՝ ներգրավվում են Ցանցի անդամ կազմակերպության (ների) միջոցով, իսկ ներգրավված միջոցները օգտագործվում են բացառապես Ցանցի նպատակների և խնդիրների իրականացման համար:

5.3 Ցանցի միջոցները գոյանում են նաև օրենքով չարգելված այլ աղբյուրներից:

6. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

6.1 Ցանցը կարող է դադարել Համաժողովի որոշմամբ, եթե այդ որոշմանը կողմ է Համաժողովի անդամների ընդհանուր թվի 2/3-ը:

6.2 Ցանցի դադարումը անդամ կազմակերպությունների համար պարտավորություններ չի առաջացնում: